



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



4986 4987  
4988

2  
L-85

2010

FB 2001



ԵՎՅԱՀԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱՎԱՐ

Ս. ՄԵԽՐՈՊԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ

ՈՐ Ի ԶՄՏՔՈՒՆԴԱ

ԲՆԴ.

ՏԵՐԵՅԱՆԹԵԱՄԲ

ՄԵՐԿԱՐ ԵՎ ԵՐԵԿԵԾԵ

Ի 1857 Յ-ԴԻ 14 ԳԻԼ 1858 Յ-ԴԻ 1

— — — — —

ԶՄՏՔՈՒՆԴԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՎԲԱՐՑ ՏԵՏԵԱՆ

1858

53435-wh



10944-57  
2

Առ պատրուակոն Պաղաքակիցս իմ

ՏԵԱՇՐ

ԶԵՐ մէջը ծնելու բարեբազդ ըլլալով, պատիւ  
համարեցի ինձ, Օ միւռնիոյ Ա. Ա' սորողեան  
Վզգային վարժարանին տնօրէնութիւնը և ձեր  
հարազատ որդւոց դաստիարակութիւնը ինձ  
յանձնելու առաջարկութիւնը : Եւ անցեալտա-  
րի ազգային պատուական Տեարց իշխանաց հա-  
մակամ հրաւիրմանէն՝ անոնց վարժարանին հեշտ  
ընթացք մը տալու խոստմանէն, աս նուիրական  
պաշտօնիս ազգիս մէջունեցած ամենածանը դը-  
ժուարութեանց չնայելով, վարժարանիս Տնօրէ-  
նութեան դաշտոնը ընդունելու յանձնառու ե-  
ղայ, քաղաքակցացս պատանեկաց օդտակար ըլ-  
լալու գիտաւորութեամբ : Եւ ան ատեն զինքս  
իսկ և իսկ երջանիկ համարեցի տեսնելովոր կե-  
նացս օրերը իմ ազնիւ արենակցացս պիտանա-  
ցու ըլլալու պիտի գործածուին, բայց դժբաղ-  
դաբար եռանդս և փափաքս միջոց ու կարո զու-  
թիւն չկրցան ըլլալ վարժարանիս յառաջադի-  
մական և յարատեական ընթացքին. անյաղթե-  
լի արգելք յանդիման ելան . թէպէտև հայկազն  
պատանեկաց դաստիարակութեան յարնչական  
քանի մը տեղեկութիւնք ունեցած ըլլամ, և ե-  
ռանդալից սիրտ մը ազդիս պատանեաց բարօ-  
րութեան համար : Աակայն երկու ամսոց պէտք  
ունեցայ վարժարանիս այլեւայլ հանդամանաց  
վրայ տեղեակ ըլլալու . և նոյնչափ մ' ալ ներ-  
քին ուղղութեան կանոնաւոր ընթացք մը տա-  
լու : Օրագիրս շնեցի, և զան ի գործ դնելու  
համար՝ հարկ դատեցի սպասել և անոր ընթաց-

քը զննել . տարի մ'անցաւ , և ահա աս երկար  
միջոցէս ետե , պատշաճ կըդատիմ այսօր ի լոյս  
ընծայել վարժարանիս կանոնները , որոնք արդէն  
տարիէ մը հետէ թէպետե բռլորովին չէ՝ բայց  
մասամբ կամ որոնք որ իմ կարողութենէս կա-  
խում ունէին՝ ի գործ գրուեցան :

Բայց որպէս զի աս գործս կարեոր և հաստա-  
տուն ըլլայ , պէտք է , Տեարք իմ , ձեր պաշտ-  
պանութեամբ և դործակցութեամբ ապահով  
ըլլայ . և բուն իսկ Ազգային հոգին հիմն ըլլայ  
իր սկզբանց , առանց որոյ անհնար է ազգիս մէջ  
հրապարակական՝ Դաստիարակութե կայսեր ըլլալը :

Երդ . տեսնենք որն է աս ամենակարե որ գոր-  
ծակցութիւնը աս տեսակ հաստատութեանց հա-  
մար , ան է՝ որօւն վրայ պիտի խօսիմ , և որն  
որ խօսքիս սկզբնական նիւթը կը կազմէ , և որն  
է՝ ան ազգային հոգին հիմն սկզբանց , ան է՝ ո-  
րուն վրայ հաստատուած են Առողք Անսուպեան  
ազգային վարժարանիս կտնոնները :

Ուստի Ազգարութիւնն ու Շշմարտութիւնը  
գլխաւոր հիմն գնելով պարտաւորուեցա՝ Առես  
և Արօնս ալ հոգւոյս գլխաւոր յուզմանց սկըզ-  
բունք , յանձնառու եղայ ինձ յանձնուած սկա-  
տոնին , և ամբողջ տարի մը վարեցի զան : Եթէ  
մասնաւոր ակնածուեիք զիս աս կարգէս մոլորե-  
ցուցեր են՝ առօյք հասակիս տկար հանձարոյն  
արդասիքն է , իսկ թէոր արժանաւոր ծառայութ  
մը ըրեր եմ Ազգիս՝ հայրենասէր հոգւոյսն է .

Մնամ Ձեր Պատուականութեան

Ամենամեծ Պատկառանոր

Ամենախնարհ և Ամձնանուեր Ծառայ

Արիս Աղբեկիւան

Օմիւռնիս , 1858 Յուլիս 1

# ԽՕԱՔ

ՅԱՀԱԳԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

## ՈՒՂԵԲՉ

Եղանակ Հայոց որ կ Օժանական

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ հիմն ամեն ընկերական միաբանութեանց, ծնաւ և տարածեցաւ տակաւառ տակաւ աշխարհիս մէջ, երբ մարդիկ սրտերնուն մէջ Աէր զգացին։ Այս երկնային ազգեցութեանէն անսպառելի ամեն առաքինական բարուց և աղնուական գործոց, Դաստիարակութեան արուեստը, թէոր կարելի է ըսել, յառաջ եկաւ, և մեր նախահարք առ սուրբ և առտուածային զգացմամբ մեծցուցին և կրթեցին իրենց որդիքը։ բայց այլեայլ ժամանակ առ ձըշմարիտ դաստիարակութիւնը այլեայլ փոփոխութեանց ենթակայ եղաւ. և քանի գնաց՝ մարդկային կրից առաջին գործիքն եղաւ. մարդ ու զեց զմարդն իրեն համար կրթել. գձձեց, նուասացուց զան նենգական միջներով և յաջազեցաւ. մարդս տկար և անզոր՝ վանուելով մարդկային ընկերական ծոցէն, վատ գերի եղաւ, և չարազեաց կրից ամենատառապանոց համբերութեամբ հնազանդ եցաւ։

Այսպէս մարդկային ազգին մէկ փոքր մասը տէր եղաւ մարդկանց ամենամեծ մասին, զորոնք սկսաւ ան ատենէն իրեն անարդական գործիք իր կրից ծառայեցնել. այսպէս եղան նախնի պետութիւնը. բայց Կոտուած չուզեց այսպիսի հըեւեր, մայ աշխարհիս վրայ, նորոգեց աշխար-

հըս ընկերութիւններով, և անոնց ծոցէն՝ հայրենասիրութեան ազդումն յարոյց ։ աս երկնաւին հուրը մարդկանց սրտին մէջ բորբոքելով, անոնց զգացուց հրապարակական դաստիարակութեան հարկաւորութիւնը :

Այս ճշմարտութիւնս Ճանչցող առաջին աղդերն եղան Եգիպտացիք և Պարսիկք ։ Եգիպտոսէն Յունաստան անցաւ, և Պարսկաստանէն Հայաստան ։ և անատեն տեսնուեցան աշխարհիս վրայ օրէնսդիրք, հրապարակախօսք, պուէտաք, քաջք, մէկ խօսքով մարդիկ իրօք հայրենասէր և անձնանուէր իրենց ազգին և կրօնին :

Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհ, բերաւ մարդկային ազգին խաղաղութեան կապը՝ և մահկանացուաց հոգւոց երանելի անմահութիւն : Այրվեցուց մարդկանց որ միայն Աէրն է սկզբնական հիմն ամեն մարդկային օրինաց, ընկերութեց և միսրանուեց ։ Ճանչցան մարդիկ աս ճշմարտութիւնս և սկսան յաւիտենական փառաց արժանի ըլլալու աշխատիլ ։ կիրքերը շիջան, հետեաբար աշխարհային փառասիրութիւններն ատեն մը գաղջ մնացին ։ պատերազմական արուեստն արհամարհուեցաւ, հոգեորական վարուց սէրն ընդհանրանալով՝ մարդկային ընկերութեան բընական բարքը տկարացաւ, մեղմացաւ ։ քաղաքական և ընտանեկան պարտաւորութիւնները զանց առնուեցաւ :

Այրէն մօլորեցուցիչ բռնաւորներ առիթ գըտան աշխարհիս վրայ երեան ելլալու, և իրենց մօլորեցուցած մարդկային ազգին մեծ մասին ըսպառմամբ տէր եղան աշխարհիս, անհամար խեղձերու արեամբ ոռոգեցին երկրիս երեսը : ան-

հետացաւ հայրենիք, ջնջուեցաւ հասարակաց  
կայանք, բնաշխնջ եղան ազգ և ընտանիք, և  
մարդկութիւնն ատեն մը սե քօզով ծածկեց իր  
կերպարանքը սովալլուկ և արիւնարքու հրէշից  
առջե :

Բայց Աստուած Եւրոպիոյ խորշերուն մէջ  
քանի մը ժողովուրդ պահեց Քրիստոսի սիրոյն  
կապով միացած, որոնք սրտերնուն մէջ Ա. Ե-  
ւետարանի սկզբունքներն ունենալով, դարձու-  
ցին աչքերնին դէպ ՚ի Արե ելք, ուսկից քրիս-  
տոնէութենէն իրենց լոյսն ու մխիթարանքը կըս-  
պասէին. աս անհուն ջահն սփռեց իր լոյսը աս  
ազգաց վրայ, որոնք ան քրիստոնէութեան լու-  
սին հոգւով՝ ազգ, հայրենիք, պետութիւնք  
կազմեցին. գրեթէ Եւրոպա բարգաւաճելէն ե-  
տե՝ աշխարհիս ալ բարոյական տէրն եղան, և  
իրենց փառքը, զօրութիւնը, մեծութիւնը, լու-  
սաւորութիւնը, և քաղաքակրթութիւնը յառա-  
ջադիմութեան վերջին ծագը հասցուցին :

Իսկ ինչ ըրին ան քանի մը մարդկանց խում-  
բերը, որոնք Կոմիոյ գագաթները մնացեր էին.  
ոմանք գերի և հպատակ նուաճեալ՝ բռնաւո-  
րաց տակ ասլրեցան, ոմանք ալ զանց առնելով  
իրենց քաղաքական պարտաւորութիւնները՝ ճըգ-  
նողական կեանք մը վարեցին. ուստի կորուսին  
հայրենիք, կորուսին ազգ, կորուսին կրօն և լե-  
զու. հազիւ հազ կարօղ եղան քանի մը սե-  
րունդ թողուլ ցիրուցան Փօքր Կոմիոյ լերանց  
ստորատը : Վհա, Տեաք իմ, աս սերունդն է որ  
աս օրուան օրս մեր Հայոց Ազգին նորէն ծնե-  
լուն սկիզբ պիտի ըլլայ :

Այս, տեարք իմ, մենք ենք ան աղդին մնաւ  
ցորդքն, որ ատեն մը հայրենեաց գիրկը քաղա-  
քակիրթ և մեծ ազգ մը կը կազմէ ինք, և երեք  
հազար տարիի չափ Ամարիս լերան ծաղկաւէտ  
պսակն եղանք: Ի՞նչ բարիքներ չըրին մեր նախ-  
նիք հայրենասիրութե՛ հոգւով, որչափ երեւելի  
և մեծամեծ գործեր չգործեցին Վեծն Տրդատ  
և Առւրեն Գրիգորիոս քրիստոնէութեան կրօնին  
սիրով. քանի ազգօգուտ կայանքներ չհաստատեց  
Վեծն Աերսէս Պարթեն: Եւելի զարմանալին՝  
միթէ մեր գրականութիւնն իսկ Առւրբ Եւե-  
տարանին եռանդամալից սիրոյն պարտաւոր չենք:  
Երկնային և անմահական սէր, որ մեր նախնի-  
քըն մոլեռանդութեան անհնարին հարուածներէ  
պահպանեց: շատ և շատ անգամ օրինաւոր եղա-  
բայրսիրութեամբ միացուց ազգը, Պատանեաց,  
Արաբացւոց, Թաթարաց թէ մոլորական աղան-  
դոց յարձակմանց գէմ, և թէ անոնց անյագ  
աշխարհակալութեան ասպատակութեանց դէմ  
արիութեամբ գէմ գնելու: Այս, տեարք իմ,  
մեր նախնեաց քրիստոնէական կրօնին վրայ ունե-  
ցած սիրոյն համար՝ թափած արեանց պարտա-  
ւոր ենք մենք, առ օրուան օրս մեր էութիւնը,  
և տակաւին կը վայելենք անոնց մեջ աւանդած  
կրօնը, լեզուն, յիշատակները, և նոյն կրօնը,  
նոյն լեզուն է զմեզ ազգ մը ձեւացնող:

Արդ՝ ջանանք արթնցնել սրտերնուած մէջ առ-  
երկնային ազգումը, թող մեզ օրինակ ըլան  
մեր նախնեաց Գրոց մէջ յիշատակաւած երեւելի  
երերը, թող մեր սրտերուն մէջ սրբազն ուխտ  
մը լոիկ մնջիկ բողըովի, անձնատնւր ըլանք հոգւ

Հովլ, մաքով և մարմնով դաստիարակութեան  
մեղ բացած գրկուց, ան մինակ կրնայ երջանիկ  
ընել մեղ, ան մինակ մեր դիտաւորութիւննեւ-  
րը, մեր միտուիները կրնոյ ուղղել, և որպէս զի  
ամէն բանէ յառաջ հայրենասէր ըլլանք սիրով,  
կրիւք, և հարկաւ, ծծել տանք մեր որդւոց ի-  
րենց մօրը կաթին հետ ազգին և կրօնին սէրը խե-  
լահաս եղած ատեննին՝ չունենան ուրիշ բան  
իրենց դաստիարակութեան սկզբունք, հապա մի-  
այն կրօն ու լեզուն, այս սէրն և սկզբունքը ի-  
րենց էութիւնն ընեն, միայն անոնց համար ապ-  
րին. թէոր ազգ մը չունենան սիրելու՝ իրենք ալ  
չըլլան. Վսան տարեկան չայ մը ուրիշ մարդ մը  
չըլլայ, հապա բուն իսկ չայ. կարդալ սորվե-  
լով միայն իր ազգին իրերը սորվի. Տասը տարե-  
կան՝ իր ազգին վիճակը ձանչնայ տասներկու տա-  
րեկան՝ բոլոր ան երկիրները, ուրտեղ չայք կը  
գտնուին. տասնուհինք տարեկան՝ իր ազգին  
տմբող պատմութիւնը. տասնուվեց տարեկան՝  
իր կրօնը. վերջապէս համայն աշխարհիս մէջ իր  
ազգին վերաբերող երեւլի գործ մը կամ հըռ-  
չակաւոր մարդ մը չըլլայ, որուն պատմութեամբ  
սիրտը լեցուն և կարող չըլլայ, անմիջապէս տե-  
ղեկութիւն տալ անոր վրայ:

Վսածներէս կարողէք հետեցնել, Տեարք իմ,  
որ օտարական ուսուցչաց սորվեցուցած ուսմունք-  
ներով չե՞ որ կուզեմ մեր որդիքը դաստիա-  
րակուին. կանոնք պէտք են, որ անոնց ուսմանց  
նիւթը, կարգը, և կերպն առաջնորդեն և ուղ-  
ղեն: Շուն իսկ չայ դաստիարակներ պէտք է որ  
ունենանք, և թէոր կարելի է՝ ամէնքն ալ երե-  
ւլի իրենց բարբով, իրենց ուղամութեամբ,

իրենց խոհեմ՝ իմացութեամբ և լուսաւորութեամբ. բայց զգոյշ կենանք դաստիարակութեան պաշտօնը արուեստ մը ընելէն. կ'աղաջեմ, Տեարք իմ, մտագիր ըլլալու այս խնդրոյս վրայ :

Միշտ ջան յանձին ունենանք մեր վարժարանաց դաստիարակութիւնը ձրիապէս և անխտրաբար մեծատունին և ազքատին բաշխելու տվորութիւնը պահելու : Բայց պէտք է նաև մեր վարժարանաց մէջ մեր հայկազն պատանեկաց համար մարմնական կրթութեան ասպարէղ մը հաստատել. աս տեսսակ կրթութիւնը, որ մեր մէջը բոլորովին մոռցուած է, ըստ իս դաստիարակութեան խիստ գլխաւոր մասերէն մէկն է, չէ թէ միայն քաջառողջ, ուժեղ և առողդ կազմուած տալու համար մեր պատանեաց, հապա բարոյական մասին կողմանէ :

Թող չտանք որ մօլորութիւններ ծնին տղոց սրտին մէջ, բաւական բան ըրած կ'ըլլանք առաքիւթեան համար. աս բանիս միջոցը վերջին դիւրութեամբ կ'ըլլայ հրապարակական դաստիարակութեան մէջ. Տղաքը անդադար վարժութեան և կրթութեան մէջ զբաղեցնելով, չէ թէ ձանձրալի հրահանգներով, որոնցմէ բան մը չըհասկնալէն զատ՝ ատելութիւն մը կ'ունենան անոնց դէմ, միայն անոր համար, որ ստիպուած են մի և նոյն տեղը մնալ միշտ. հապա այնպիսի կրթութիւններով, որոնք հաճելի կըլլան իրենց. բայց չէ թէ զատ զատ և ըստ իրենց հաճոյից զուարձացնելով, հապա ամենքը միատեղ և հրապարակաւ, որպէս զի միշտ ամենքն ալ մի և նոյն նպատակ մը ունենան, որն որ զիրենք խնդրական մրցութեան դրգուէ, և որուն ամէն :

քնալ միակամրդիմեն՝ այս է միայնիկ միջոց հայկաղն պատանիքը եղացյալսիրութեան, միաբանութեան և կանոնապահութեան վարժեցնելու. և իրենց եղանց աշաց առջև ապրելով հասարակաց հաճութիւնը ստացնելու :

Ո՞ւնաւանդ պէտք չէ որ մըցանակներուն վարձատրութիւնները ուսուցչաց և տնօրինաց ձեռամբ տրուին պատանեկաց, հապա հանդիսականաց համամիտ գատողնութեամբ և հանդիսաւոր յարգական ձեւեր տալով հասարակութեան բազծացնել, որպէս զի ազգային հանդէս մը ըլլայ, և հայրենասէր անձինք պարտք մը համարին իրենց ներկայ գանուելու :

Ի՞ոյց որչափ կարգ և կանոն գնենք հրապարակական գատարակութեան, որուն մանրամասն հանդամանաց վրայ աս տեղս չեմ կարող երկարորէն խօսիլ, անհրաժեշտ հարկ է պարէտք կամ պաշտպանք հաստատել, որոնց վարժարանաց տեսչական վերին մատոկարարութիւնը ձեռնքերնին ըլլայ :

Ա երջապէս, Տեարք իմ, աստեղս միայն ան կարեոր մասանց վրայ կը խօսիմ, որոնք աս տեսակ հաստատութեանց յաջողութեան և յարատեռթեան կը ճառացէն, և այսչափ բաւական է ձեղ որոնց կ'ուղղեմ խօսքս :

Ե յսպիսի ոգւով ուղղենք մեր պատանեկաց գատարակութիւնը, բարքը, սովորութիւնները, կերպերը, զարգացնենք անոնց սրաին մէջ ազգասիրութեան և մարդկութեան սերմը, որն որտակաւին մոլորական սկզբմամբ չէ ապականեր : Եզդը իր եղած ձգնական և տագնապիչ վիճակէն նորէն ծնելով, իր նոր ծննդեան տարիք կը

Դրոշմէ, և տեսնելով իր դեռակիրթ ծնողաց ը-  
բածը, աւելի համբերելով՝ ևս առաւել կը  
չահի. կը սիրէ անձամբ իր ազգը, կը պաշտէ  
հոգւով իր կրօնը, կը սորվի և կը խօսի իր լե-  
զուն. աս է մի միայն օր մը ազգը երջանիկ և  
բարեբաստ ընելու միջոցը. իր ծոցէն՝ իր նպա-  
տակը՝ ի գերե հանող կիրքերն՝ ի բաց հանելով,  
ազգն իր մէջ այն հոգին, այն բարքը կը սնուցա-  
նէ, որ զինքը սիրել կուտայ և նորոգուելով ինք-  
նիրմէն այս իւր նոր տարիքին մէջ նոր ծնող  
ազգի մը զօրութիւնը կ'առնու:

Ծայց առանց աս զդուշուոր ձեռնարկութեանց  
բան մը չյուսանք մեր սովորութիւններէն, որ-  
չափ իմաստութեամբ և որչափ հեռատեսու-  
թեամբ մեր մէջը հաստատուած երկնան, ՚ի գե-  
րե և ունայն պիտոր ելլեն միշտ. քանի մը վո-  
նասաքեր սովորութիւններ կրնտնք ուղղել ու-  
րիշներ մոցընելու համար, որոնց չար հետեանքը  
չենք կարող գուշակել, ասոնք են տեարք իմ, այս  
հիմնական սկզբունքներն, որոնք կարծեմթէ ան-  
հրաժեշտ են և չէ կարելի անտես առնել:

Չեմ ուղեր նաև զանց առնել խօսիլի ուսու-  
մանց այն եղանակ հրահանդին վրայ, որուն պար-  
տաւոր ենք հետենիլ մեր ազգային վարժարան-  
ներուն մէջ. դիտենք մեր տղոց յարմարութիւ-  
նը, յանկարծ ցատկենք զգալի իրերէն անզգալի  
իրաց. տղայ մը որ կը կարդայ՝ չխորհիր, և կար-  
դալով՝ չկրթուիր, հապա բառեր կը սորվի.  
պէտք է տղայ մը իր չորս դին եղած երեւթից  
մոադիր ընել, շուտ մը հետաքրքրիր կ'ըլլայ. պէտք  
չէ փութալ իր հետաքրքրութիւնը յագեցընել:  
Ծան մը չգիտնայ որովհետեւ իրեն սորվեցուցինք,

հապա որովհետեւ ինք իրմէն իմանալով սորվեցաւ : Իրեն մօաց իմացութեան յարմարել խընդիր մը և թողուլ որ ինք իրմէ լուծէ : Երբէք այնպիսի ճառեր որ չեն կարող իմանալ, հապա պարզ և գիւրըմբռնելի . մեր գաստիարակութեան հոգին անոնց շատ բան մէկէն սորվեցընել չըլսոյ , հապա արգիլել՝ որ անոնց ուղեղին մէջ միայն ուղիղ և պարզ գաղափարներ մըտնեն . թէպէտե քիչ բան սորվին՝ հոգ չէ , հերիք է որ չխսալին , ճշմարտութիւններ գնենք անոնց գլխին մէջ , միայն անոր համար՝ որ զիրենք մալորութեանց գէմ պաշտպանեն :

Դատումն և ինելք կամաց կու գան տըսց վրայ , նախապաշտումն տմբոխին աս վէրջիններէն է որ պէտք է պաշտպանել տղաքը : Ո՞է որ զիտութեանց իսկ և իսկ նայելու ըլլանք՝ ան յատակ անեղը պիկիանոսի մը մէջ կը մտնենք , և երբէք կարող չենք կրնար ըլլալազատիլ . տըզոց տարիքն ալ թողուլ որ անցնի երթայ՝ պատշաճ չէ բնաւ , ընդ հակառակն՝ բաւական ատեն չունիք պէտք եղածն ընելու . մտածենք անգամ մը , թերես կիրքեր չմօտեցած , մտաւորական և իմացական տարիքն այնչափ կարճատե է որ յիմարութիւն մըն է մատղաշ տղաք զիտնական ընել . ամեն գիտութիւն , ամեն լեզու սորվեցընելով անոր , հերիք է անոնց ճաշակ տալ դանոնք սիրելու և գիւրին եղանակ սորվելու . տհան ըստ իս իրօք հիմնական սկզբունք մը օրինաւոր գաստիարակութեան , որն որ յարմար ըլլոյ մեր աղգին պատանեկաց :

Ա երջապէս կը վերջացընեմ խօսքս մեր գեռաշատ պատանիքը լեզուագէտ ընելու ունեցած

Հանքերնուն վրայ քանի մը Խորհրդածութիւնը  
ընելով . միտքերնիս այնպէս դրած ենք որ մեր  
պատանիք օտար ազգաց լեզուները սորվելով՝ ի  
բենց գաստիարակութեան վերաբերած ամենա-  
կարևոր ճիւղը կատարած կ'ըլլան . մ.լորական  
կարծիք . Փորձով իմացուած է և մենք ալ ամեն  
օր կը տեսնենք , որ տասներկու կամ տասնու-  
շորս տարեկան պատանիք բաց 'ի օքանչելիքնե-  
րէն , երբէք կարող չեն եղած երկու լեզու խօ-  
սիլ , բայց թէ որ լեզուագիտութիւնը բառա-  
գիտութիւնը ըլլար , ինչպէս որ շատերնիս կը կար-  
ծենք , անշուշտ ան ատեն դեռահաս պատանե-  
կայ համար յարմար լեզու մը կ'ըլլար , բայց ա-  
մեն մէկ լեզու իր առանձին ձևերն ունի , առ  
ձևերը ազգաց բարուց բնութենէն յառաջ ե-  
կած են . և աշխարհիս ամէն ազգաց լեզուն իր  
բարուց փոփոխութենէն կախում ունի , և զան  
ազգին բարուց հետ կը պահէ և կը փոխէ : Տը-  
ղյ մը սովորութեամք սորված միայն մէկ լեզու  
մը գիտէ , որ է իր մօրմէն սորված լեզուն . եր-  
կու լեզու սորվելու համար՝ պէտք է իմաստներ ,  
միտքեր , խօսքեր , իրար հետ համեմատելու ,  
գատելու կարող ըլլայ . ամեն բառ տղու մը հա-  
մար հազար ու մէկ տարբեր նշաններ ունի :

Բայց պիտի ըսուի ինձ թէ շատ լեզուներ կը  
խօսին մեր փոքր պատանիք . ես չեմ տեսած ,  
և տեսածս իրենց ռամկական լեզուն եր , որն որ  
ֆուանսերէն կամ Յունարէն համանշտն բառե-  
րով կը խօսուէր : Բառեր և խօսքեր իրար հետ  
կարկտելով , զրեանց մէջէն քանի մը խօսք քա-  
ղելով , կը կարծենք լեզու մը խօսիլ , և ուր ,  
անտեղ՝ որ ոչունկնդիր ունինք և ոչ գատող :

Ահա մեր պատանեաց լեզուագիտութիւնը :

Ուկդիթողունք աս անպտուղաշխատանքը մեր  
մատղաշ պատանեկաց վրայէն, գոհ ըլլանք մի-  
այն օտար լեզուի մը ընթերցանութեան վար-  
ժութեամբ, ջանանք մեր լեզուաւ խօսիլ, մեր  
լեզուաւ գրել, մեր լեզուաւ խորհիլ սորվեցը-  
նել մեր պատանեաց, և ան ատեն միայն ձեռք  
զարնենք ուրիշ լեզուներ խօսեցնել մեր տղոցը,  
երբ խորհիլ, գատել, բաղդատել գիտեն. ապա  
թէ ոչերբէք կարող չենք ըլլար սորվեցնել լեզու  
մը կատարելապէս . ականջի վարժութեամբ սոր-  
ված լեզուն տարիքն աճելով կը մոռցուի :

Ահաւասիկ, Տեարք իմ, յառաջիկայ ճառագ-  
րաց սկզբանց վասյ հիմնելով, Օմիւռնից Հայ-  
ոց Առւրբ Ուերոպեան վարժարանին կանոնները  
՚ի գիր կ'արձանագրեմ'ի բարգաւաճումն փառաց  
Հայկազեան Տոհմիս և Հայաստանեայց Առւրբ  
Եկեղեցւոյ, որու հոգին եղոծ է թէ անցած  
գացած դարերուն մէջ և թէ ներկային և ա-  
պառնիին աւ պիտի ըլլայ :

# ՅԵՅՏԵՐԸՐԱՒԹԻՒՆ

## ԿԱՌԱՎԱՅՐ

Ս. ՄԵԽՐՈՊԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱԿԻՆ

ՈՐ Ի ԶՄՏՏՈՒՄՆ ԱՅ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Վահաճան Հարժարանիս

Բարգաւաճումն Հայրենասիրութեան. Օ արդացումն Հայաստանեայց Առւրբ Եկեղեցւոյ .  
Օտուալըւմն Վզդային լեզուի ուսմանց և գիտութեանց միջոցաւ : Այսինքն տալ հայկազն պատանեկաց ազգային յատուկ Դաստիարակութիւն մը , և Կրօնական , Գրագիտական , Իմաստասիրական , Քաղաքական և Ճարտարագիտական գիտութեանց ճաշակը :

Դլսաւոր ուսմաւնք Վզդային և Քրիստոնէական  
Դաստիարակութեան համար :

Վզդային Գրականութիւն ,

— Պատմութիւն ,

— Աշխարհագրութիւն ,

— Կրօն ,

— Օրէնք ,

— Բարք ,

Դլսաւոր ուսմաւնք ընդ հանուր Քաղաքակըրթութութեան համար :

Տիեզերական պատմութիւն ,

Տիեզերախօսութիւն ,

Իրաւագիտութիւն ,

Իմաստասիրութիւն ,

Գաղղ . Անդ . Տաճ : Յուն : Լեզուք :

Դիմաւոր ուսմունք ճարտարագիտութեան  
համար .

Թուաբանութիւն ,

Տումարագիտութիւն ,

Տնտեսական գիտութիւն ,

Վաճառականութիւն ,

Ոկզունք Երկրաշափութեան ,

— Բնական պատմութեան ,

— Բնադիտութեան ,

— Բնալուծութեան ,

Գծագրութեան :

## ՅՈՒՆԻԱԾ. Բ.

Բաժանում ուսմանց

Նախընթաց յօդուածին մէջ սահմանուած  
ուսմունք՝ երկու գլխաւոր մուսանց բաժնուածեն .  
Ա . Նախակրթական կամ Խտորին ուսմունք .

Բ . Աւարտական կամ Բարձրագոյն ուսմունք .

Նախակրթական ուսմունք սահմանուած են  
վեց տարեկանէ ինչուան տասնուջորս տարեկան  
պատանեկաց համար : Խոկ Աւարտականք տասն-  
ուջորս տարեկանէ ինչուան տասնութեց կամ տաս-  
նեռթ տարեկան պատանեաց համար :

Նախակրթական ուսմունքն են ,

Հանգանակ Քրիստոնէական կրօնի .

Հայերէն Քերականութիւն հանգերձ կրթու-  
թեամբ արդեան լեզուի .

Թարգմանութիւն գրաբառէ յաշխարհաբառ  
և յաշխարհաբառ .



Ընթերցանութիւն և Գեղագրութիւն մը հ.  
իցէ լեզուի մը հանդերձ Վերականական սկզբա-  
մամբ :

- Սկզբունք Թուաբանութեան ,  
 — Ազգային պատմութեան ,  
 — Արբազան պատմութեան ,  
 — Աշխարհագրութեան ,  
 — Գնագրութեան :

Բարձրագոյն ուսմունքն են ,

Քրիստոնէական կրօն ,

Ազգային գրականութիւն ,

Տիեզերական պատմութիւն ,

Տիեզերախօսութիւն ,

Տումարագիտութիւն ,

Սկզբունք Իրաւագիտութեան ,

— Տնտեսական գիտութեան ,

— Խմատասիրութեան .

— Բնական պատմութեան ,

— Երկրաչափութեան ,

— Բնագիտութեան ,

— Բնալուծութեան ,

— Վաճառականութեան :

Ատորաբաժանում Կախակրթական ուսմանց :

Կախակրթական ուսմունք երեք աստիճանի  
բաժնուած են :

Ա. Աստիճան սւամունք վեց տարեկանէ ինչ  
ուան ինն տարեկան պատանեկաց համար սահ-  
մանուած է , զոր օրինակ .

Ծնթերցանութիւն ,

Գեղագրութիւն ,

Ընթերցումն թուանշտնից ,  
Կրօնական հրահանգ , Հայր և Հաւատամ :

Բ . Աստիճանի ուսմունք ինն աարեկանէ ին-

չուան 42 տարեկան պատտնեաց համար :

Ը . Վասն քերականութեան .

Կրթութիւն ու զլսդրութեան ,

Գլխաւոր տեղեկութիւն ազգային և սրբազն  
պատմութեանց ,

Զորս գրունք թուաբանութեան ,

Վկընական տեղեկութիւն աշխարհագրութեն ,

Կրօնական հրահանգ , Հայր և Հաւատամ ,  
Հանգերձ թարգմանութեամբ ,

Ար և իցե լեզուի մը ընթերցումն ու գեղագլ  
րութիւն :

Գ . Աստիճանի ուսմունք տասն երկու տարե-  
կանէ ինչուան տասն ու չորս տարեկան պատմո-  
եաց համար :

Ը . Վասն քերականութեան ,

Կրթութիւն արդեան լիգուի ,

Թարգմանութիւն յաշ . 'ի գրա . և 'ի գրա . յաշ .

Համառոտ պատմութիւն ազգային և սրբազն ,

Աշխարհագրութիւն ,

Կրօնական հրահանգ , Հայր և Հաւատամ ,  
Ժեկնութեամբ ,

Արև իցե լեզուի մը քերականութեան ։ մասը :

Առորաբաժանումն Աւարտական կամ Քարձրա  
գոյն ուսմանց :

Քարձրագոյն ուսմունք երեք կամ չորս տար-  
ուան ընթացքի վրայ բաժնուած են :

Ը . տարի .

Դարտարախոսութիւն .

Բանաստեղծութիւն ,

Տիեզերական պատմութիւն ,

Տումարագիտութիւն ,

Կրօնական հրահանգ Հոյաստանեաց Ո. Եկեղեցւոյ ,

Ակզբունք երկրաչափութեան ,

Արևիցէ լեզուի մը քերականութեան Բ. մասը :  
Բ. տարի :

Պատմութիւն ազգային գրականութեան ,

Իրաւաբանութիւն ,

Աշճառականութիւն ,

Տնտեսական գիտութիւն ,

Ակզբունք գրականութեան Գաղղ. լեզուի .

Գ. տարի :

Ակզբունք իմաստասիրութեան ,

— Բնական պատմութեան ,

— Բնալուծութեան ,

— Բնագիտութեան :

## W ՅՈՒՆԻԱԾ. Գ.

Բաժանումն Եղարդաց , Դասարանաց , և Ժամանակաց ,

Ուսմանց բաժանմունց գրութեան , ուսմանողաց տիրոց կարողութեան և թուոյն նայելով , վարժարանիս ուսմանողք երեք կարգի բաժնուած են , իւրաքանչիւր կարգ երեք գասարանաց ստորաբաժնելով :

Ը. և Բ. կարգերն իրենց գասարաններով՝ նախակրթական կամ ստորին ուսմանց ընթացքին կը հետեւին . Գ. կարգն իր երեք գասարաններով աւարտական կամ բարձրագոյն ուսմանց իւրաքանչիւր կարգ՝ նոյնահասակ կամ աւելի

ու նուտզ տարբերութեամբ , ըստ ընդարձակութեան սրահին՝ հարիւր ուսանող կը պարունակէ :

Իւրաքանչիւր դասարան ըստ դասատուութեան ժամանակին , որ սովորաբար որ և իցէ գիտութեան կամ լեզուի մը համար մէկ ժամէն աւելի շուեեր , 24 — 30 , կամ ևս առաւել 36 ուսանողացմէ աւելի չէ կարելի կտզմել :

Ուսմանց պարապման սահմանեալ ժամանակն

Վմառն ու ձմեռ վարժարանին դռները առաջուեան ժամը եօթին կամ եօթնուկէսին կը բացուին . ճիշտ ժամն ութին՝ դասարանաց , որ ուսմանց դասատուութեան սկիզբ է . կէսօրին դասատուութիւնը կը վերջանայ , մէկ ժամդըպոցին դռները գոց կը մնան . կէսօրէն ետե ժամը մէկին՝ դռները կը բացուին , երկուքին՝ դասարանաց դասատուութիք կը սկսին , և չորսին՝ կը վերջանան . թէ որ ամառ է՝ տշակերտք ժամ մը հանգիստ կ'ընեն , ժամ մըն ալ իրենց ուսմանց պատրաստութեան պարապելով՝ իրիկուան ժամը վեցին կ'աշճակուին . իսկ թէ որ ձմեռ կամ դարուն՝ ըստ օրերուն երկայնութեան և կարճութեան՝ իրիկուան արձակման ժամանակնելը կ'որոշուին :

Վաժարանին գոյ Եշած ժամանակն են .

Վմեն կիրակի , և Տէրունական տօն օրերը ,

Վմեն հինգշաբթի՝ միայն կէսօրէն ետե ,

Ծարեկենդանին՝ վեց օր ,

Զատկին՝ վեց օր ,

Եւ քառասուն օր ամառնային հանգիստ :

Անսամի վարժարանին դպրոցական պարոյն ընթացք :  
 Ակադեմիկեր է սկիզբ դպրոցական տարւոյն .  
 Ակադեմիկեր  
 Հոկտեմբեր } Առաջին եռամսեայ  
 Ենյեմբեր  
 Դեկտեմբեր }  
 Յունուար } Երկրորդ եռամսեայ  
 Փետրուար }  
 Մարտ  
 Կարիլ } Երրորդ եռամսեայ  
 Մայիս  
 Վերող Յունիս ամիսը հրապարակաւ հարցա-  
 քնութեան պատրաստութեան սահմանուած է .  
 Յուլիս ամսոյն առաջին օրէն կ'ըսկոի հրապարա-  
 կաւ հաջաքնութիւնը և նոյն ամսոյն տասնու-  
 հինգին կը վերջանայ , և երկրորդ կամ երրորդ  
 կիւրակէն պարգևաբաշխութեան հանդիսաւոր  
 օրը ու վերջ դպրոցական տարւոյն է :

Առաջ և լեզուաց դաստիուութեան սահմանեալ ժամերն  
 օրուան և շաբթուուն մը :

Առաւօտեան ժամը ութէն ինչուան տասն , չորս  
 օտար լեզուաց դաստիուութիւն կ'ըլլայ , հինգ դա-  
 ստրանաց մէջ , ամեն լեզուաց դաստիուութէ  
 և ժամ սահմանուած է ամեն մէկ ուսանողաց  
 խումբերու . ամեն մէկ լեզու ուսանողաց խում-  
 բերն երկու են , առաջինը ընթերցանութեան  
 ու գեղագրութեան կը հետեի . երկրորդը քե-  
 րականական ուսմոն . բաց ՚ի Գաղղիերէն լեզու  
 ուսանողաց , սրոնք չորս խումբ են :

Ժամը 10էն ինչուան 12՝ այերէն լեզուի դա-  
 ստիուութէ ժամանակն է վորժարանիս ընդհանուր  
 ուսանողաց . աս դաստիուութէ ժամանակին շ ժամ

սահմանուած է երկու պատճառաւ , նախ՝ աշակերտաց ընական հարկաւորութեանցը համար թիչ մը միջոց առնուելուն , երկրորդ՝ ամեն մէկ գասարան 30 և 36 ուսանողացմէ բաղկացած ըլլալուն համար :

Այս օրէն ետե ժամը մէկէն ինչուան երկու ուսմանց պատրաստութեան սահմանուած ժամանակն է :

Իսկ երկուքէն ինչուան չորս՝ երկու գիտութեանց գասառուութեանց . թէ որ ամառ է՝ չորսէն ինչուան հինգ՝ աշակերտը թէ իրենց բընական հարկաւորութիւնը կը կատարեն և թէ կը հանգստանան , ժամը հինգէն ինչուան վեց՝ հետեւալ օրուան դասուց պատրաստութեան կը բարձրին , և ճիշդ երեկոյեան ժամը վեցին կ'արձակուին :

Բայց թէ որ ձմեռ է և օրերը կարճ , երեկոյեան հանգիստ չէ կարելի ընել :

Դասապոտութիւնն իւրաքանչյուր լեզուաց և ուսմանց շաբանան մը ընթացիկ մէջ :

Հինգ անգամ Հայերէն լեզու օրը շ ժամ Հինգ անգամ օտար լեզուներ — 1 —

Վմեն մէկ ուսում

Ըաբաթ մը երկու անգամ

Ըաբաթ մը երեք անգամ 1 —

Կրօնական հրահանգ շաբաթը և անգամ 2 —

Գծագրութիւն շաբաթը մէկ անգամ 3 —

Ժամերգութիւն հինգ անգամ շաբաթը 1 —

### ՅՈՒՆԻՑԱՆ. Դ.

Վարժարանին բաստիարակութեան վըաց

Առւրբ Ա՛նօրոգեան վարժարանին դաստիարակութիւնը բարյական , մատառական և մարմնաւոր է՝ երեք գլխաւոր հիմանց վրայ հաստատուած , բարեպաշտութեան , ուսումնասիրութեան և քաջառողջութեան :

Վարժարանս՝ ընդհանուր աշակերտքը քրիստոնէական բարի վարուց մէջ կրթելու և մեծացընելու նպատակաւ իւրաքանչիւր աշակերտաց վրայ հետեւեալ անհրաժեշտ պարտաւորութիւնները կը գնէ , և անոնց գործադրութիւնը կը պահանջէ իբրև առանձին և մասնաւոր պարտը իւրաքանչիւր աշակերտէն :

Աէրն՝ համայն աշակերտաց ընկերական վիճակին գլխաւոր հիմն պիտի ըլլայ :

Եղբայրսիրութեան և ընկերսիրութեան հոգին՝ իւրաքանչիւր աշակերտ գործով և արդեամբ պիտի ցոյց տայ իր վարուց ընթացքին մէջ :

Ուստի վարժարանս՝ խստիւ կ'արգիլէ աշակերտաց

Իրար հետ քէն և ատելութիւն ունենալն , կուռարար , զրիժառու և հակառակորդ ըլլալն :

Կը պահանջէ

Փոքր տղոցմէ յարգանք՝ մեծ տղոց . մեծ տղոցմէ ներողամտութիւն՝ փոքր տղոց :

Իւրաքանչիւրմէ ցաւակութիւն , գութ , օգնութիւն՝ ընկերոջը բնական պակասութեան , մատառ տկարութեան կամ պատուհասութելուն վըայ :

Ալ պարտաւորեցնէ աշակերտքը

Իրարու օգնել, իրարու սխալսնացը ներել և  
իրարու թերութեանց չդիտել, լրաբեր չըլլալ,  
իրենց ծնողքը բոլոր սրտանց սիրել ու յարգել,  
իրենց խոստովանահայրը, ուսուցիչը պատուել,  
անոնց հնազանդել, և իրենց ընկերները սիրել.

Իւրաքանչիւր Հայկացն պատանի պարտաւոր է  
իր ազգը, կրօնը և լեզուն բոլոր հոգւով և իր  
անձին պէս սիրել.

Վմեն աշակերտք պարտաւոր են Առւրբ Օատ-  
կին և Ծննդեան՝ վարժարանիս խոստովանա-  
հայր քահանային խոստովանելու և համայն ա-  
շակերտօք և գաստիարակաց առաջնորդութեամբ  
սուրբ եկեղեցին երթալ սուրբ հաղորդութիւն  
առնելու, Տէրունական և հանդիսաւոր և ամեն  
կիրակի օրեր բոլոր աշակերտ իրենց դատիա-  
րակաց առաջնորդութեամբ սուրբ եկեղեցին եր-  
թալ, սուրբ պատարագին ներկայ գտնուիլ.

Ա արժարանիս ուսմանց հրահանգին վկայ

Ա արժարանիս ուսմանց հրահանգին եղանակը  
համայնավարժական է, այսինքն՝ տասներկու,  
քսան և չորս, կամ երեսուն և վեց աշակեր-  
տաց մէկեն ուսումները կ'աւանդուին .

Ա' եծ զգուշութի կ'ըլլայ որ ուսմունք աշակեր-  
տաց կարողութենէն բարձր չըլլան, երբէք իըր-  
թին և վերացեալ իմաստներով գրուածներ ա-  
շակերտաց սորվիլ չտրուիր, երբէք բարձր վար-  
գապետական ձեւեր, այլաբանական ձառեր ու  
խօսքեր, որոնցմէ դեռահաս աշակերտ մը բան  
մը կարող չըլլար իմաստալ, հապա պարզ, դիւ-  
րըմբ ունելի և ընտանեկան ոճով. կը նայուի որ  
աշակերտքն աւելի խօսին, քանիմէ ուսուցիչը որ-

և իցէ ուսման դասատութիւն բանիւք և զը-  
րոց աւանդութեամբ կ'ըլլայ :

Վցդային արդեան գրաւոր լեզուն միայն կեն-  
դանի լեզուն է վարժարանիս մէջ, և որով ամեն  
ուսմունք ալ կը սորվուի . Անթէ մաթիքական  
ուսմունք Վաղղիարէն լեզուաւ կրնան ըլլալ յա-  
ռաջադէմ աշակերտաց :

Ամեն դասատու իր դասարանին բոլոր աշակեր-  
տաց անուանց ցուցակը ունի, որոնց մէջ իր սոր-  
վեցաւցած ուսմանց դասուց օրերը, շաբաթները,  
ամիսները, եռամօնեայ շրջանի մէջ բովանդակած  
նշանակուած են. իւրաբանչիւր աշակերտին բարի  
վարուց և յառաջադիմութեան աստիճանները  
թուանշաններով կը նշանակուին :

Վարժարանս՝ թէ գրագիտական թէ ուսում-  
նական ուսմանց և գիտութեանց վերաբերեալ  
պէտք եղած երեւելի դասական գիրքերը, աշխար-  
հագրական պատկերներն ու ատլասները, երեւելի  
արանց, քաղաքաց, կենդանեաց և շինուց պատ-  
կերները, աշխարհագրական, բնագիտական և բը-  
նալուծական զանազան գործիքներ ունի և պէտք  
է տակաւին ունենայ:

Պարտք է թէ ներքին և թէ արտաքին դասա-  
տուաց, որ և իցէ ուսում աւանդելու ժամա-  
նակ նիւթ կամ իմաստ մը, որ վարժարանիս նը-  
պատակին կը նկատէ ինչպէս հայրենասիրական,  
ուսւմնասիրական, քարոյական և քաղաքական խըն-  
դիր մը, աշակերտաց ու շադրութիւնը նոյն նիւ-  
թին վրայ գրաւել, պարզ և քաղցրավորյաց ա-  
տենաբանութեամբ նոյն իմաստը մեկնելանոնց :

Ուստի վարժարանս կը պահանջէ իւրաբանչիւր  
աշակերտէ :

Աշուանդալից ջանք և աշխատանք ուսմանց ,  
ամեն օր ներկոյ գտնուիլ իր ուսմանց դասա-  
րանը , ըստ իր կարողութեան քաջ սորվիլ և  
կատարել իր պարտաւորութիւնները , իր գը-  
եանց և տեարակաց մաքուր պահելը ու միա-  
տեղ ունենալը , մոագրութիւն՝ իրեն տը-  
րուած դասուց , դպաղումն և աշխատանք իր  
պարտաւորութեանց :

Երբէք արտաքին խօսակցութիւն , երբէք ան-  
հրաման տեղէն շարժիլ , երբէք ուրիշ զբօսալի  
գրքեր , օրագիրներ կամ ուրիշ դասուց զբա-  
ղիլ կում որ և իցէ խաղով պարապ ժամանակ  
անցնել դասառման ժամանակ :

Ու արժարանին աշխիւրսաց ժաշառաշնչան վկայ .

Պէտք է ,

Վմեն օր վարժարանիս սրահները , դասարան-  
ները , բակերը աւլուին , փոշիները ջնջուին և  
օդը մաքրուի :

Շաբաթը անգամմը (հինգշաբթի կէս օրէն  
ետե ) սրահից , դասարանաց , դրասեղանից , պա-  
տուհանաց փոշիներն ու սարգերը ջնջուին , և  
հարկաւոր տեղուանք մաքրուին .

Տարին անգամմ՝ ալբուրը շէնքը սրբուի , մաք-  
րուի , և փլած տեղուանք շինուի և նորոգուի .

Զմեռն օդը ջերմ և ամառը զով պահուի .

Վմեն տշակերտաց մարմնոյն և հանդերձից մաք-  
րութիւնը նոյուի :

Երբէք աշակերտքը դատարկ ու առանձին  
չթողուի :

Մնհնարին աշալը ութեամբ գեռշացուի դե-  
ռահաս պատանիքը մարմնավնաս և հոգեկորոյս  
մոլութենէ և անակնկալ չար դեպք :

Աշակերտաց շարժուածքին, նստուածքին, քա-  
լուածքին կրթութեան հոգ տարուի .

Աշակերտաց բնական հարկաւորութիւնները  
կանոնաւոր և ժամանակին 'ի գործ դնելարուի .

Երկայն ժամանակ խիստ լուռութեամբ, անընդ-  
հատ աշխատութեամբ և ուսմանց պարտաւո-  
րութիւններով աշակերտաց ձանձրութիւն չտալ .  
վրէժինդրական հոգւով գան չարբուցանել և  
ահարկու սպառնալիքներով չսարսափեցընել զա-  
նոնք .

Աշակերտաց ներելի ըլլան օգտաւէտ խօսակ-  
ցութիւնք, անմեղ զուարձալի շարժական և  
ընթացական խաղերը անոնց կազմուածոց քսջա-  
ռողջութեան համար .

### ՅՕԴՈՒԱԾԵ.

Առ-ը Ա' Երրորդական վարժարանին բարյագոյն ճագախ-  
բարութեան վեց :

Վարժարանս՝ պէտք է ունենայ երկու կամ  
չորս հայրենասէր և ուսումնասէր կամ ուսումն-  
ական պարէտք կամ պաշտպանք, որոնց ձեռամբ  
վարժարանիս բարձրագոյն մատակարարութիւ-  
նը 'ի գործ դրուի .

Պարետաց պաշտօնին ընթացքը չորս տարի շա-  
րունակ պէտք է որ տեէ .

Վ. յս չորս պարէտքը միատեղ ազգէն ընտրը-  
ւած Մասնաժողով մը պէտք է կազմեն վարժա-  
րանիս բարձրագոյն կառավարութեան պաշտօնը  
վարելու համար .

Ընտրութեան ձեզ հետեւալ կերպով կարե-  
լի է ըլլալ ազգին ձեռամբ .

Վ. Հայկազն անձը, որ ուսումնասէր և հայ-  
րենասէր կամ ուսումնական ըլլութել կը միացնէ

նաեւ ազգին մէջ ունեցած իր ընկերական վիճակին կարևորութիւնը և ազգեցութիւնը, ազգին փառաց ու պատւոյն տենչացող ու նախանձու է, և միշտ իր հայիկական անսուան և ազգային պարտաւորութեանց հաւատարիմ մնալով, օրինակ հայրենասսիրութեան եղած է, կամ ազգին կողմէն կը հրաւիրուի, կամ ինքզինքը կը ներկայացնէ իրրեւ հետամուտ աս պաշտօնիս, և ազգային ընդհանուր ժողովքին և ազգին միաբերան հաւանութեամբ քուեսով կ'ընտրուի :

Այս մասնաժողովը պէտք է լուծուի, ինչուան որ ուրիշ մասնաժողով մը իրեն յաջորդելու պատրաստ ըլլայ :

Յէ որ չորսէն մէկը կամ բացակայութեան և կամ տկարութեան պատճառաւ քաշուիլ կամենայ, կարող ըլլայ տեղեկալ մը թողսւլ մէկալ երեքին հաւանութեամբը :

Այս մասնաժողովին պաշտօնը պիտի ըլլայ վարժարան՝ իւր հաստատած նպատակին ուղղակի տռանց խոտորման ու զլել անկողմնակալ պաշտպանութեամբ, անոր կանոնաց գործադրութեան յարտուելութեան և յառաջադիմութեան հոգու խնամք տանել, և եկամուց ու ծախսուց մատակարարութիւնը տնօրինել :

Մասնաժողով պէտք է ըլլայ ամեն անդամ՝ որ հարկը կը պահանջէ :

Բայց բաց ՚ի հարկէն անհրաժեշտ պարտական է եռամսեայ քննութեան վրայ համար հարցնել տնօրէնէն, և ներկայ գտնուիլ մը ցանակաց բաշխման, և մանաւանդ հրտպարակաւ հարցաքըննութեան ունկնդիր վկայ ըլլալու :

Կորաբանչիւր պարէտին կամ մասնաժողովի իւ-

քաքանչիւր անդամին առանձին պաշտօնը պիտի ըլլոյ :

Ա. Տեսուչ և քննիչ, որուն պաշտօնը պիտի ըլլոյ տնօրէնէն համար հարցնել գասատուաց պարտաւորութեանց գործադրութե վրայ, ուսմանց ըստ վարժարանին վախճանին շարունակութեանը կանոնապահութեանց ճշգութիւնը քննել, վարժարանին հարկաւոր պիտոյքը իմանալ և եռամսեայ ու տարեկան հարցաքննութեան յայտարարութիւնները քննել և տեղեկանալ :

Բ. Վատակարար և գանձապետ, որուն պաշտօնը վարժարանիս եկամոից և ծախուց հաշուեգիրքը, գրամական արկեղ պահպանութիւնը, տնօրէնին, ուսուցչուց կամ որ և իցե ծախուց վճարում պիտի ըլլայ :

Վիւս երկու պարէտք գործակատար և խորհրդական պարէտք պիտի ըլլան :

Վասնաժողովին անդամները իրարմէ ոչ աւելի և ոչ նուազ ձայն պիտի ունենան, և վարժարանին նկտամամբ իրարու ստորագրութիւնը պատուելու պարտաւոր պիտի ըլլան :

Խնդիր մը որոշելու համար պէտք է մասնաժողովը ամբողջ ըլլայ :

Խնդիրները գրով պէտք է ըլլան, և զայն վաերացընելու համար վարժարանիս կնիքով իւշաբանչիւր անդամ իր ստորագրութեամբը պիտի կնքէ :

Վանց մասնաժողովին ըսրս անդամոց ստորագրութեան կնքուած խնդիր մը անվաւեր ոլէտք է համարուիլ :

Այստարանին նկատմամբ որ և իցե խնդիր + աշ

ուաջարկութիւն գաղտուկ պարտ է ընել, ինչու ան վաւերական որոշուիլը :

Չորս տարին անդամ մը ըստ պահանջման իրաց և ժամանակին՝ վարժարանիս սահմանադրութեան երկրորդական կանոնները կրնան փոփոխութիւն կրել և աւելի ընտրելագոյն ըլլունոր ընտրուած մասնաժողովին ձեռամբ :

Իսյց երբէք պէտք չէ ընդհանուր ազգը ներէոր անօր հիմնական և սկզբնական վախճանը փոփոխութիւն կրէ և այլայլի :

Մասնաժողովը երբէք լոկ անձի մը որատասխանատու պիտի չըլլայ իր գործողութեանց համար :

Իսյց տարին անդամ մը ազգային ժողովը վարժարանին թէն ներքին և թէ արտաքին ընթացքին վրայօք տեղեկագիր մը տալու պարտաւորէ . նաև իւրաքանչիւր աշակերտին ծնողոց՝ իր որդւոյն ուսման մէջ ունեցած հանդամանքը :

Իսց ՚ի ասկէ՝ մասնաժողովին պարտաւորութիւնն է՝ նպաստ և օգնութիւն մատակարարել, Արարատեան որդւոց, որոնք նշտեհ և պահպուխտ Օմիւռնիոյ մէջ ապաստանուեր են, և անոնց բարօրուեն և բարեբաստուեն՝ իր իմաստուն և նախահայեաց ազգեցութեամբ հոգն ու խընամքը փոյթ հոգւոյն ունելով, ոչ ժամանակ՝ ոչ հանձար՝ ոչ միջոց խնայել. մէկ խօսքով աղքերնուս մէջ արժանաւոր և ամեն հանդամանքներով անթերի, գլխաւորապէս հայրենասիրական հոգւով քաղաքացիներ յառաջ բերել:

Մասնաժողովին անդամոց վարձատրութիւնը ուրիշ բան պիտի չըլլայ, բայց միայն յարդիւնոքերած Հայկազն բարեկիրթ պատանեաց հոյլեր տեսնելն ազգին մէջ, որոց հոգւոյն բարբառը

ուրիշ բան ջըսար հապա երախտագիտութեն , և զիրենք իբրև երկրաշէն և հայր հայրենեաց Տեղ-  
րաններու և Աերսէսներու նմանցնելով , իբենց  
հայր պանդիտոց Զայաստանեայց քաղցր և փա-  
ռաւոր տիտղոս տալը , և իբենց օրհնութեանց  
հետ անկեղծ և հոգեբուզիս աղօթքներ մաղթե-  
լը ամենաբարձրելոցն Կոտուծոյ :

### ՅՈՒՆԻԱԾ Զ.

Վարժարանին Ներդին պնօքնութեան վրայ :

Վարժարանս պէտք է ունենայ Տնօրէն մը ,  
բուն հայ , բանագէտ և փորձառու դաստիարա-  
կութեան պաշտօնին մէջ , հմուտ երոպական քա-  
ղաքակրթութեան , տեղեակ հայկական կրօնին ,  
լեզուին և պատմութեան , գիտնական Հայոց օ-  
րինաց , բարուց և այլ և այլ հանգամանաց . ո-  
րուն հայրենասիրութիւնը բոլորովին անկասկած  
և վարքը անարատ ու գգուշաւոր ըլլայ :

Պաշոնը պիտի ըլլայ վարժարանիս Դաստիարա-  
կապետութեան , Ուսումնապետութեան և Տը-  
նօրէնութեան ուղղութեան լիակատար գործա-  
դրութիւնը :

Վարժարանին տնօրինական պաշտօնն է , սահ-  
մանուած կանոնաց գործադրութիւնը , ներքին և  
արտաքին ուսուցչաց դասատութեանց ժամանակ-  
ները որոշել , գասարաններ սահմանել , ըստ կա-  
նոնաց աշակերտ ընդունել , աշակերտաց դասա-  
րանափոխութիւնն ընել , բաց ի հաստատեալ  
կանոնաց միօրեայ և ժամանակաւոր կարգերն  
ու կանոններ դնել . վարժարանին ընդհանուր  
ընթացքին վրայ անընդհատ հսկել , ջան և փոյթ .

ընել անոր յառաջադիմութեան և յարատեւթեան համար, որոնց համար ինքն է միայն համարատու Վասնաժողովոյն,

Վարժարանին Վասումնապետական պաշտօնն է, սահմանուած ուսմանց հրահանգն ի գործ դնել, ներքին և արտաքին ուսուցչաց ցոյց և տուն առև հրահանգելի ուսումնակրը, գասերը, քաղելու գրեանքը, գասատուութեան եղանակը, քննել ուսուցչաց օրական, շաբաթական և միամսեայ և եռամսեայ ցուցակները, անձամբ ընել ընդհանուր աշակերտաց եռամսեայ քընանութիւնը և իւրաքանչիւր աշակերտի ըստ արժաժանւոյն մըցանակներն որոշել, եռամսեայ քընանութեան յայտարարութիւնը և իւրաքանչիւր աշակերտի յառաջադիմական փորձերը ներկայացնել Վասնաժողովոյն, որոնց համար ինքն է համարատու :

Վարժարանին Դաստիարապետական պաշտօնն է, ուսուցիչ գաստիարակաց պարտաւորութիւնները սահմանել և անոնց ամենակատար գործադրութիւնը պահանջել. ընդհանուր աշակերտաց քաջառողութեան, բարի վարուց և ուսումնասիրութեան հոգ ու խնամք սւնենալ. Մոլի աշակերտքն ու զզել, բարեթարայները վարձատրել, երեք տմիսն անգամմը հայրենասիրական, բարոյական և ուսումնասիրական յորդ որանաց խօսքեր ու ճառեր ընել, ոուրբ Օտառկի և սուրբ Ծննդեան խոստովանութեան և ապաշխարանաց օրերը՝ կրօնասիրութեան և բարի վարուց յորդ օրանը ու խրատներ տալ, որոնց համար ինքն է համարատու Վասնաժողովոյն :

Ներքին և արդաքին Ուսուցչաց վայ:

Վարժարանո ղետուք է ունենայ, ըստ գասա-

բանաց և աշակերտաց թուոյն հայկական դաստիարակութեան համար քաջ ուսուցիչներ, որոնց վարքը, առողջութիւնը փորձուած, հայրենասիրութիւննին անկասկած և ազգին ծանօթ անձինք ըլլան։

Ուսուցչաց ընդունելութիւնը Վասնաժողովոյն ձեռամբ պէտք է ըլլայ հետեւեալ կերպով, Վարժարանիս Ծնօրէնը Վասնաժողովոյն ներկայաւթեան և ունկնդրութեան պէտք է քննէ ուսուցչութեան պաշտօնին հետամուտ ըլլողանձը այն ուսմանց մէջ, որոնց համար դասաւուութի կ'աւղէ ընել, և տեսնելով անոր ընդունած դաստիարակութեան վկայագիրները, ինքնալ այսինքն Վասնաժողովն անոր հրամանագիր տայ վարժարանիս մէջ ուսուցչութեան պաշտօնը վարել։

Վի միայն Վասնաժողովը ուսուցչաց վարձքը կարող է որոշել։

Վասնաժողովը երբէք տգէտ, մոլի, տկար անձինք վարժարանիս երբեւ ուսուցիչ կարող պիտի չըլլայ ընդունել։ Ուսուցչին հայրենասիրական և առաքինական վարքը աւելի նախապատիւ պիտի սեպէ, քան թէ անոր անկանոն վարքով տաղանդներն ու ձիրքերը։

Վ Որ և իցէ հայկազն ուսուցիչ, որ վարժարանիս մէջ դասաւուութիւն ընելու յանձնառու պիտի ըլլայ, ի հարկէ պէտք է նուիրէ անոր իւր ձիրքը, ժամանակը և ջանքը, իր ուսուցչութեան պաշտօնին հետ մասնաւոր դաստիարակութեան պաշտօնն ալ պէտք է ընդունի, և պարտք յանձին ընէ աշակերտի մը վարժարանին վախճանին և կանոնաց գէմ ըրած անկարգութիւր ուղղել։

Վ արժանին ուսուցիչը դաստիարակը Տնօրինին իր վրայ սահմանած պարտաւորութեանց գործագիր ըլլալու ղարտաւոր է :

Ժիր բանիքուն ուսուցիչը մը , որ ստորին ուսմանց դասաւուութենէն կ'ըսկսի իւր պաշտօնը , կրնայ տարուէ տարի յառաջնալով դասարան փոխել և բարձրագոյն ուսմանց դասաւութիւն ընել . եթէ փորձով և գործով Ամսնաժողովյն հաւանութիւնը և Տնօրինին վկայութիւնը կ'ըստանայ :

Յէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը երբ իրենց պաշտօնը վարելու վրայ են , ոչ մէկ սեպհական գործ մը կարող են տեսնել . բարեկամի մը հետ տեսնուիլ , օրագիր կամ գիրք կարդալ , նամակ մը կամ հաշիւ մ'ընել , ծուխ քաշել , հաց ուտել , ննջել , հանդստանալ , ուտանաւոր կամ ճառ գրել , կամ աշակերտներէն մէկն իրեն տեղակալ ընել և թողուլ երթալ , վարժարանիս տնօրէնութիւնը կ'արգելու :

Յէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը պարտաւոր են իրենց պաշտօնը մտադրութեամբ՝ ՚ի գործ գնել , ուշադիր և տէր ըլլալով թէ իրենց շարժուածոց ու խօսուածոց և թէ իրենց այլ և այլ հանդամանաց . կատաղի , անզուսպ մոլեգին կիրք ցուցընելց աշակերտաց զդոյշ պիտի ըլլան , մեծ ակնածութեամբ և պատկառանօք պիտի վարուին դասարանի մէջ , իրենց զբաղումը ուրիշ բան չպիտի ըլլայ , բայց միայն հոգ ու ջանք և խնամք ունենալ աշակերտաց վրայ , սիրելով , համազելով և խրատելով զիրենք :

Արգելեալ է նաև ուսուցչաց աշակերտքը իրենց անձնական գործոց ծառայեցընելը , զար

նոնք վարժարանէն դուրս խրկելով.

Այս թէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը կարող չեն իրենց համար սահմանուած գրասն զանները կամ դասարանին ստովները վերցընել, փախել անոնց դիրքը կամ բան մ' աւելցընել.

Այս թէ արտաքին ուսուցիչը կարող չեն իրենք իրենց ներելով, փեղոյր դլուխնին, սիկարը բերաննին ուսման սրահը կամ դասարան մաննել.

Թէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը երբէք վարժարանին տնօրինական կառավարութեան կարող չեն խառնուիլ, իրենք միայն իրենց յանձնուած պաշտօնին գործակատարն են, որուն համար պատասխանատու են տնօրինին.

Թէ որ վարժարանին նկատմամբ՝ խնդիր մը կ'ունենան տնօրինին պարտական են իմացընել. Եթէ անձնական է խնդիրը՝ գրով տնօրինին ձեռամբ Վասնաժողովոյն.

Թէ ներքին և թէ արտաքին ուսուցչաց պարտքը չէ աշակերտաց դասական պիտոյքը հոգալ, այսինքն գրեանք, թուղթ, գրիչ են ծախել աշակերտաց, հասկա իրենց ստորագրութեամբը թղթի մը վրայ նշանակելով տղթուն պիտոյքը, նոյն տղթուն ձեռամբ վարժարանին պիտոյից մատակարարին պարտական են իմացընել.

Թէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը տնօրինէն պիտի չպահանջեն իրենց վարժքը, հասկադանձադետ պարէտէն. տնօրինը պարտական է իրենց միամանայ պաշտօնին կատարելապէս իւգործ դնելնուն վիայադիրը տալու միայն.

Թէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը իրենց

առրվեցուցած ուսմանց հետեւող աշակերտաց վարուց և յառաջադիմութեան , և թէ դասարանը ներկայ և բացակայ գտնուող ուսանողաց օրական ցուցակը պիտի բռնէ ամենամեծ ճշշտութեամբ և անխարութեամբ , այս ցուցակը եռամսեայ պիտի ըլլայ , տնօրինին ներկայանալի , որուն մէջ տնօրէնը իւրաքանչիւր աշակերտին ամենօրեայ բարի վարուց և յառաջադիմութեան առտիճանը և ընթացքը պիտի քննէ , աչքէ անցընէ :

Ծէ ներքին և թէ արտաքին ուսուցիչը իրենց հրաժարականը չտուած երկու ամիս յառաջ տնօրինին իմաց տալու պարտական են . տնօրէնը մինչեւ մասնաժողովոյն որոշման վճիռը չառնու , չկարող անոնց հրաժարականը ընդունիլ . || ասնաժողովու պարտական է ուսուցիչմը հրաժարականն ընդունելին յետոյ , անոր թէ օրինաւոր ուսուցչութեան և թէ հայրենասիրական վարուց համար վկայական գիր մը տալ :

|| արժարանին պնդեսին պարզուցը կը ա :

Ա արժարանս պէտք է ունենայ տնտես մը և գունապան մը , որոնց գործն ըլլայ վարժարանին ներքին ծառայական պարտքերը կատարել .

Տնտեսը պիտի հոգայ վարժարանին սրահից , դասարանաց , բակերուն , դռներուն , փեղկերուն , գրասեղաններուն մաքրութիւնը , և բանալիներն իւր ձեռքը պիտի ըլլան :

Տնտեսին գլխաւոր պարտքին մէկն աղ պիտի ըլլայ վարժարանին դքան պահպանութիւնը , որ պէս զի այցելուի մը գալուստը իմաց տայ տնօրինին՝ զանդակի մը հնչմամբ . թէ որ այցելուն կասկածաւոր հետաքրքիր մ'է , ինք պիտի ուղե

կից ըլլայ անոր՝ վարժարանին մէջ։ Խակ թէոք  
պատուաւոր անձ մը՝ դաստիարակաց մէկուն ա-  
ռաջնորդութեան պէտք է յանձնէ։

Տնտեսը կէսօրուան ճաշը վարժարանին մէջ ը-  
նող աշակերտաց վրան պիտի հսկէ, և ներկայ  
պիտի գտնուի անոնց գլուխը։

Տնտեսն ու գոնապանը աշակերտաց արձակ  
ման ժամանակ հսկողութիւն պիտի ընեն անոնց  
վրայ, մինչեւ անոնց տուները ցըռւելը, որպէս  
զի փողոցներուն մէջ չար գէպք մը տեղի չունե-  
նայ։


Դռնապանին անհրաժեշտ պարտքը պիտի ըլ-  
լայ ճեմչից պահպանութիւն ընել, մանաւանդ  
այն ժամանակ՝ որ աշակերտը իրենց բնական  
հարկաւորութիւնները կատարելու վրայ են։

Թէ տնտեսն ու թէ գոնապանը երբէք աշա-  
կերտաց պօռալով, կանչելով պիտի չյանդիմա-  
նեն, անկարգութիւն մը պատահելու ըլլայ տ-  
նոնց մէջ, պարտական են իմոց տալ տնօրինին  
կամ դաստիարակաց։

Խստիւ արդիլեալ է տնտեսին և գոնապանին  
վարժարանին աշակերտաց հետ առևտուր ընել  
և ընտանեկան կերպով վարուիլ։

Եակ վարժարանին դուռը անպահապան թո-  
ղուլ և առանց իմաց տալու երթալ, մանաւանդ  
աշակերտ մը թողուլոր մեկնի առանց անորմէ  
վարժարանին կնիքով մեկնելու տօմսն առնելու։

Եակ պարտական են թէ տնօրինին և թէ ու-  
սուցչոց հրամայած ծառայութիւնները անմիջա-  
պէս կատարել։





4986, 4987, 4988

4986, 4987, 4988

«Ազգային գրադարան»



NL0023466

0023466

0023465

0023464

0023463

«Ազգային գրադարան»



NL0023465

«Ազգային գրադարան»



NL0023464

«Ազգային գրադարան»



NL0023463

2010

7-47

